Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ԱՋԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(Նինոծմինդա, 15 հունիսի, 2011 թ.)

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Մեր հոգում երախտագիտություն ու գոհաբանություն է առ Ամենախնամ Տերը, որ Մեզ համար իրականություն դարձրեց Նինոծմինդայում ձեզ հետ հանդիպումը, խնդության ու բերկրանքի այս հիշարժան պահը: Մեր եւ Մեր հոգեւոր եղբոր՝ Համայն Վրաց Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքի ներկայությունը այստեղ վկայում է հայ եւ վրացի հավատակից մեր ժողովուրդների ջերմ հարաբերությունների մասին՝ իրենց լուսավոր անցյալով ու առավել խոստումնալից ապագայով:

Սիրելիներ, բերել ենք ձեզ օրհնությունը հանուր հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ողջույններն ու բարեմաղթանքները՝ հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի: Ուրախ ենք մեծապես, որ Սամցխե-Ջավախքում եկեղեցասեր ու ազգասեր հայորդիներդ հաստատուն ու անխաթար եք պահում հավատավոր կյանքը՝ խարսխված ազգային մեր նվիրական արժեքներին, մեր լույս հավատքին, մեր Սուրբ Եկեղեցուն: Տեղյակ ենք, որ ձեր ազնիվ աշխատանքով, ջանքեր եք բերում Վրաստանի առաջընթացին, նպաստում երկրում բարօրության ու վերազարթոնքի համար իրականացվող ծրագրերին ու գործընթացներին: Սիրելիներ, գիտենք նաեւ, թե ինչպիսի տոկունությամբ եք դիմագրավում տարբեր մարտահրավերներ ու դժվարություններ, որոնց մեջ, սակայն, վառ եք պահում հույսն ու լավատեսությունը, առավել շեն ու բարօր կյանք կերտելու վճռականությունը: Գովելի են իշխանությունների կողմից Նինոծմինդայում կյանքի բարելավման ջանքերը, որոնց դրսեւորումն է Վահան Տերյանի անվան հայկական դպրոցի բացումը: Հայ դպրոցը կենարար ակունքն է մայրենի լեզվի եւ հայ ինքնության պահպանման ու հայեցի դաստիարակության, որոնց դուք հետամուտ ու նախանձախնդիր եք: Վրաց բարեկամ պետության հարստությունն է բազմազանությունը այս երկրի ավանդույթների, որոնք նպաստում են միմյանց առավել ճանաչողությանը եւ հարաբերություններին այստեղ բնակվող տարբեր ժողովուրդների զավակների՝ միախմբելով նաեւ նրանց ջանքերը՝ համատեղ ընթացքով ու աշխատանքով լուսավոր ապագայի հաստատման համար: Վրացական հնագույն ավանդության համաձայն Թորգոմի որդիներն են Հայոս եւ Քարթլոս եղբայրները՝ մեր բարեկամ ժողովուրդների քաջարի նախնիները: Եւ այսօր ուրախություն է Մեզ համար անդրադառնալ, որ Նինոծմինդայում ՀՀ դեսպանի եւ Սամցխե-Ջավախքի նահանգապետի մասնակցությամբ տեղադրվել է Հայոսի եւ Քարթլոսի հուշարձանը՝ մեր երկու ժողովուրդների բարեկամության ու եղբայրության վկայությունը հավերժացնող կոթողը: Լիահույս ենք, որ մեր բարեկամությունը պիտի շարունակի զարդարվել նորանոր արդյունքներով՝ ի զորացումն մեր երկրների եւ ի բարօրություն իրենց նոր՝ ազատ ու անկախ կյանքը կառուցող մեր ժողովուրդների:

Աշխարհասփյուռ մեր ժողովուրդը, ինչպես ամենուր, Վրաստանում եւս, ի դեմս ձեզ,

վկայեց, որ հայությունը, իր հոգում միշտ պայծառ է պահում հավատքի աստվածապարգև լույսը, որը միշտ ճառագում է հավատացյալի սրտում, եւ երբեք չի դադարում հայ հավատացյալի եւ հոգեւորականի աղոթքը, չի պարպվում հույսն ու սերը, չի լռում հայալեզու խոսքը: Առ Տերն ապավինության այս հաղթական ոգով այսօր դուք, սիրելի հավատավոր հայորդիներ, հուզական խանդավառությամբ եւ ջերմությամբ դիմավորեցիք ու ողջունեցիք Հայրապետիս, մեր հոգեւոր եղբորը՝ Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքին եւ Մայր Հայրենիքից Մեզ հետ ժամանած Մեր շքախմբի անդամներին: Հուսառատ հոգու մխիթարություն եւ ուրախություն ենք ապրում, որ ձեր ազնիվ ու պարկեշտ կյանքի, շինարար եւ ստեղծարար ոգու շնորհիվ արժանանում եք Բարձրյալն Աստծո օրհնությանը, քանզի Ամենակալ Տերը երկնային շնորհներով բարեզարդում է ձեր հավատավոր, եկեղեցասեր կյանքի ուղին եւ միշտ զորակից է լինելու դժվարությունների հաղթահարման եւ նոր բարի արդյունքների ձեռքբերման ճանապարհին: Հպարտ ենք ձեզանով եւ գոհունակ սրտով Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեզ: Քաջալեր հոգով Մեր հորդորն ենք բերում, որ շարունակեք ապրել մեր հավատքի կենդանարար զորությամբ ու ազգային մեր արժեքներով, հավատարիմ մնացեք Սուրբ Էջմիածնին, որի լույսով եւ օրհնությամբ աշխարհի բոլոր կողմերում միասնական է մեր ժողովուրդը:

Աղոթում ենք, որ Տերը մեր՝ Քրիստոս, խաղաղության ու բարօրության մեջ պահպանի Նինոծմինդայի ողջ բնակչությանը, օրհնի ձեր կյանքը բազում բարի արդյունքներով, քաջառողջությամբ, արեւշատությամբ եւ հոգեւոր պայծառությամբ:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն: